

«Ինտերակտիվ մարդու իրավունքներ»

Եվրոպական իրավունքի 2009-2010 թթ. դատախաղ-մրցույթի

Դատական գործի և պաշտոնական կանոնների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղումներ

Սույն պարզաբանումներն ու ուղղումները «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» եվրոպական իրավունքի 2009-2010թթ. դատախաղ-մրցույթի դատական գործի և պաշտոնական կանոնների կապակցությամբ ընդունված և հաստատված միակ պաշտոնական պարզաբանումներն ու ուղղումներն են: «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» եվրոպական իրավունքի 2009-2010թթ. դատախաղ-մրցույթի դատական գործը և պաշտոնական կանոնները այսուհետ պետք է դիտարկել բացառապես ստորև նշված պարզաբանումների համապատասխան: Սույն պարզաբանումներում ներառված են պատասխաններ Մրցույթի դատական գործի և պաշտոնական կանոնների վերաբերյալ պարզաբանումների և ուղղումների կապակցությամբ թիմերի կողմից ներկայացված գրավոր խնդրանքներում ներառված միայն այն հարցադրումների կապակցությամբ, որոնք առնչվում են «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» եվրոպական իրավունքի դատախաղ-մրցույթի դատական գործին և Մրցույթի իրականացման ընթացակարգերին, և չեն մեկնաբանում կամ հստակեցնում դատական գործում եղած այն փաստերն ու իրադարձությունները, որոնց կապակցությամբ իրավական մեկնաբանություններ և լուծումներ տալը թիմերին առաջադրված խնդիրն է:

Մրցույթի պաշտոնական կանոնների վերաբերյալ պարզաբանումներ.

Հարց 1.

Ըստ 5.3.6. կետի, փաստերի մանրամասն շարադրանքը կարող է ներառել փաստերից բխող անհրաժեշտ հետևություններ, սակայն, այն չի կարող պարունակել իրավական եզրահանգումներ: Ես կցանկանայի իմանալ այս երկու արտահայտությունների էական տարբերությունը, քանզի, գործում եղած փաստերից արվող հետևությունները կարող են ունենալ իրավական բնույթ: Օրինակ, գործում նշվում է, որ Կազմակերպության անդամները նշում են, որ ըստ իրենց Սուրբ գրքի արգելված է փակ ծիսակատարությունների նկարագրությունը դրանց չմասնակցող անձանց: Այս փաստը մեկնաբանելիս անհրաժեշտություն է առաջանում հղում կատարել տարբեր իրավանորմերի կամ դատական նախադեպերի և մեկնաբանություն կատարել դրանց հիման վրա, այսինքն, դա կհամարվի իրավական եզրակացություն՝ն:

Պարզաբանում.

«Գործի փաստերից բխող անհրաժեշտ հետևություններ» և «իրավական եզրահանգումներ» արտահայտությունների տարբերությունը կայանում է նրանում, որ գործի փաստերից բխող անհրաժեշտ հետևությունները սահմանափակվում են փաստերից բխող եզրահանգումներով, իսկ իրավական եզրահանգումները կատարվում են իրավական նորմերի մեջբերման կամ հիշատակման և գործի փաստերի հետ դրանք համադրելու արդյունքում:

Հարց 2.

5.3.7. Կետի վերաբերյալ կցանկանայի ճշտել, «ներպետական օրենսդրություն» արտահայտությունն այս դեպքում ընդգրկում է արդյոք միջազգային իրավական ակտեր, ինչպիսին է, օրինակ՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիան», որին հղում կատարված է գործում:

Պարզաբանում.

Համաձայն պաշտոնական կանոնների 5.3.7 կետի Ներպետական օրենսդրությունը պետք է ներառի այն բոլոր օրենսդրական ակտերը որոնք ընդունվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիային անհրաժեշտ է անդրադառնալ «Կոնվենցիայի ենթադրյալ խախտման(ների) վերաբերյալ համապատասխան փաստարկների համառոտ շարադրանքը» բաժնում՝ համաձայն պաշտոնական կանոնների 5.3.8 կետի:

Հարց 3.

5.2. կետում նշված է, որ գրավոր փաստարկների բոլոր մասերի տեքստի տառատեսակը պետք է լինի Arial AM 12: Արդյոք դա վերաբերում է նաև խորագրերին՞ :

Պարզաբանում.

Համաձայն պաշտոնական կանոնների 5.2 կետի գրավոր փաստարկների ***բոլոր*** մասերի տառատեսակը պետք է լինի Arial AM 12՝ այդ թվում խորագրերը:

Հարց 4.

5.3.4. Կետի համաձայն «Օգտագործված գրականության ցանկը» պե՞տք է կամ կարո՞ղ է արդյոք պարունակել նաև ինտերնետային վեբկայքերին հղումներ (link-եր) :

Պարզաբանում.

Համաձայն պաշտոնական կանոնների 5.3.4 կետի «Օգտագործված գրականության ցանկը» պետք է պարունակի յուրաքանչյուր աղբյուրի նկարագիրը՝ այդ թվում ինտերնետային վեբկայքի(երի) ամբողջական հասցեն(երը),ինչպես նաև կայքում տեղադրված աղբյուրի անվանումը, օրինակ՝. Mihajlovic^o v. Croatia, Judgment of 9 June 2005 www.echr.coe.int.com, էջ 3:

Հարց 5.

Արդյո՞ք գանգատի առարկայի վերաբերյալ ներկայացվելիք պահանջները կարող են դուրս գալ Մրցույթի գործում նշված պահանջների հոդվածների շրջանակներից:

Պարզաբանում.

Համաձայն պաշտոնական կանոնների 5.3.9 «Գանգատի առարկայի վերաբերյալ պահանջ» գլուխը բացառապես պետք է սահմանափակվի կոնվենցիայի կոնկրետ հոդվածների խախտումը արձանագրելու մասին խնդրանքով: Կողմերը պետք է սահմանափակվեն Մրցույթի գործի IV գլխում սահմանված Կոնվենցիայի կոնկրետ հոդվածների խախտում կամ խախտման առկայությունը բացառելու մասին խնդրանքով և իրավունք չունեն լայնացնելու կամ նեղացնելու այդ հոդվածների շրջանակը:

Հարց 6.

Խնդրում եմ պարզաբանել «Օգտագործված գրականության ցանկ» բաժնում ինտերնետային աղբյուրների գրանցման կարգը:

Պարզաբանում. – Տե՛ս հարց 4-ի վերաբերյալ պարզաբանումը:

Հարց 7.

Գոյություն ունի Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան դիմելու հատուկ ձևաթուղթ: Անհրաժեշտ է արդյո՞ք կիրառել այդ ձևաթուղթը:

Պարզաբանում.

«Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի դատախազ-մրցույթի համար մշակված են հատուկ ընթացակարգեր: Եվրոպական Դատարան դիմելու հատուկ ձևաթուղթը կիրառելի չէ Մրցույթի նկատմամբ: Գրավոր փաստարկների կազմման եւ ներկայացման ընդհանուր պահանջները ներկայացված են Մրցույթի պաշտոնական կանոնների «ԿԱՆՈՆ 5»-ում:

Մրցույթի դատական գործի վերաբերյալ պարզաբանումներ.

Հարց 1.

Արդյո՞ք դատական գործի 5-րդ և 9-րդ կետերում խոսվող Փակ ծիսակատարություններին կարող են մասնակցել բոլոր մկրտված անդամները, թե միայն այն մկրտված անդամները, ովքեր 3 տարի Կազմակերպության բարձրաստիճան կրոնավորի հովանավորությամբ ուսումնասիրել են Կրոնի Սուրբ գիրքը, թե՞ մկրտված լինելն արդեն իսկ ենթադրում է Սուրբ գիրքը 3 տարի ուսումնասիրած լինելը:

Պարզաբանում.

Մկրտված լինելն արդեն իսկ նշանակում է, որ անձն առնվազն երեք տարի Կազմակերպության բարձրաստիճան կրոնավորի հովանավորությամբ ուսումնասիրել է Կրոնի Սուրբ Գիրքն ու քարոզները:

Հարց 2.

Արդյո՞ք երրորդ անձանց ցանկացած եղանակով Փակ ծիսակատարությունների մասին տեղեկությունների հրապարակման կամ տրամադրման արգելքը նույնպես նախատեսված է «Ճշմարիտ հավատք» կրոնի Սուրբ գրքով:

Պարզաբանում.

Այո, և այդ հանգամանքը շարադրված է Մրցույթի գործի 9-րդ կետում:

Հարց 3.

Որքանո՞վ է Սուրբ գրքով նախատեսված Փակ ծիսակատարությունների գաղտնիությունը համապատասխանում Կազմակերպության Կանոնադրությանը:

Պարզաբանում.

Այս հարցը չի առնչվում Մրցույթի դատական գործով առաջադրված նպատակին: